## *ԲԱԶՄԱՎԱՍՏԱԿ ՄԱՆԿԱՎԱՐԺՆ ՈՒ ԳԻՏՆԱԿԱՆԸ*
## *ԿԱՐՈ ՍՏԵՓԱՆԻ ԴԱՎԹՅԱՆ* - 100



2004 թ. հոկտեմբերին լրանում է բազմավաստակ մանկավարժ, բարեխաղճ Կարո Ստեփանի Դավթյանի ծննդյան 100-ամյակը, մի անհատականություն, որն իր ողջ գիտակցական կյանքը նվիրել է Արցախում կրթության և գիտության զարգացման սուրբ գործին:

Կ.Ս.Դավթյանը ծնվել է 1904 թ. հոկտեմբերին Արևմտյան Հայաստանի Վանի նահանգի Ռշտունյանց գավառի Տափ-Սոսկուն գյուղում՝ չքավոր գյուղացու ընտանիքում: 1915 թ. դժնդակ օրերին, կորցնելով բազմանդամ ընտանիքի բոլոր անդամներին, թուրքական յաթաղանից մազապուրծ, մեծ դժվարությամբ հասնում է Արևելյան Հայաստան, հանգրվանում Էջմիածնի, Դիլիջանի, Իջևանի, Թբիլիսիի, Կարսի, Լենինականի որբանոցներում:

1924 թ. ավարտում է Լենինականի պոլիգոնի մանկատներին կից դպրոցի տասնամյա դասընթացը՝ մանկավարժական թեքումով բարձր դասարաններում ուսանելուն զուգընթաց դասավանդելով տեղի տարրական դպրոցում:

1925 թ. Կ.Դավթյանը գործուղվում է Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի շրջան, տարբեր տարիների աշխատում Լյուլասազ, Մեծ շեն, Մարտակերտ գյուղերի տարրական և միջնակարգ դպրոցներում որպես ուսուցիչ և վարիչ, ուսմասվար և դիրեկտոր: Ուսման ծարավ երիտասարդ մանկավարժը միաժամանակ 1933 թ. ավարտում է Երևանի մանկավարժական ինստիտուտի հեռակա բաժնի մանկավարժության, իսկ 1936 թ՝ հայոց լեզվի և գրականության ֆակուլտետը: 1937թ. նա տեղափոխվում է Շուշու մանկավարժական ուսումնարան՝ որպես ուսուցիչ և ուսմասվար, իսկ 1939-1953 թթ շարունակում մանկավարժական գործունեությունը Շուշու (1944 թ. օգոստոսից վերանված Ստեփանակերտի) պետական ուսուցչական երկամյա ինստիտուտում՝ որպես մանկավարժության, այնուհետև հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ՝ երբեմն համատեղելով հայոց լեզվի և գրականության ֆակուլտետի դեկանի պաշտոնը: Նույն տարիներին պարբերաբար դասավանդում է նաև Ադրբեջանի հեռակա մանկավարժական ինստիտուտի ամառային դասընթացներում:

1948 թ. Երևանի պետական համալսարանում պաշտպանում է թեկնածուական ատենախոսություն՝ «Լեռնային Ղարաբաղի Ավտոնոմ Մարզի բարբառային քարտեզը» թեմայով, և ստանում բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:1950 թ. նրան շնորհվում է դոցենտի, 1956 թ.՝ հանրապետության վաստակավոր ուսուցչի կոչում:

1953 թվականից հմուտ մանկավարժն ու գիտնականը աշխատում է ԼՂԱՄ մարզժողկրթբաժնում որպես մեթոդկաբինետի վարիչ և դպրոցական տեսուչ, իսկ 1969 թ. հրավիրվում և դոցենտի տարակարգով աշխատանքի է անցնում Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի և գրականության ամբիոնում, որտեղ աշխատում է մինչև իր կյանքի վերջը՝ 1985 թվականը՝ դասավանդելով գրաբար, հայ բարբառագիտություն, լեզվաբանության հիմունքներ, ընդհանուր լեզվաբանություն առարկաները:

2001թ. վաստակաշատ մանկավարժը ճանաչվել է XX դարի արցախի հարյուր լավագույն մանկավարժներից մեկը:

Մեծ է Կարո Դավթյան մարդու և մանկավարժի ավանդը: Այսօր Արցախի և Հայաստանի Հանրապետության բազմաթիվ բուհերում և հանրակրթական դպրոցներում աշխատում են նրա հարյուրավոր սաները, որոնց նա դաստիարակել է հայրենասիրության և հայրենասիրության, մարդասիրության և համեստության, սկզբունքայնության և ընտրած մասնագիտության հանդեպ ունեցած մեծ սիրո իր անձնական օրինակով: Եվ այսօր շատերն են երախտագիտությամբ հիշում իրենց մեծ ուսուցչի անունը, փորձում ամեն կերպ նմանվել նրան, շարունակել նրա ազնիվ ավանդույթները:

Կարո Դավթյանը հեղինակ է 60-ից ավելի գիտամանկավարժական և մեթոդական բնույթի հոդվածների, որտեղ արժեքավոր դիտողություններ ունի քերականության, ուղղագրության, կետադրության, հայերենի նորմաների պահպանման և զարգացման, լեզվի դասավանդման մեթոդների, տնային աշխատանքների համակարգման, ճշգրտական կրկնությունների, ստուգողական շարադրությունների և բազում կարևոր այլ հարցերի վերաբերյալ:

Որոշ հոդվածներում նա քննության է առել և արժևորել Սայաթ-Նովայի, Միքայել Նալբանդյանի, Գրիգոր Զոհրապի, Հովհաննես Թումանյանի, Ակսել Բակունցի, Եղիշե Չարենցի ստեղծագործությունները:

Առավել մեծ է Կ. Դավթյանի ներդրումը բարբառագիտության բնագավառում: 1966թ. հրատարակվում է նրա «Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը» ստվարածավալ աշխատությունը՝ յուրահատուկ մի կոթող, որ անմահացնում է տարածաշրջանի բոլոր բարբառները իրենց ենթաբարբառներով և խոսվածքներով համերձ: Պատահական չէ, որ այն բարձր են գնահատել հայ լեզվաբանության մեծ երախտավորներ Գ. Ջահուկյանը, Ա.Ղարիբյանը, Էդ. Աղայանը և ուրիշներ:

Ի տարբերություն իր նախորդների՝ հեղինակը ընտրել է ուսումնասիրության ուրույն մեթոդ՝ ելնելով լեզվաբանական աշխարհագրության արդիական պահանջներից:

Աշխատությունը բաղկացած է ներածությունից և հինգ բաժիններից: Ներածական մասում ներկայացվում են աշխատության ստեղծման նախադրյալները, նպատակը, կառուցվածքը, Ղարաբաղի տարածքի բարբառների վերաբերյալ և այդ բարբառներով տպագրված աշխատանքների ցանկը: «Բնակավայրերի անունները» ենթաբաժնում համարակալված են բոլոր գյուղերը: Հետագայում լեզվական յուրաքանչյուր երևույթ քննելիս հղումները կատարվում են այդ համարները, ինչը հնարավորություն է տալիս վերլուծության ենթարկել բոլոր գյուղերի խոսվածքները՝ վեր հանելով դրանց առանձնահատկություններն ու ընդհանրությունները: «Հնչյունաբանություն» բաժնում ներկայացվում են Ղարաբաղի խոսվածքների հնչյունների տատատարբերությունը, արտասանության վայրը, հնչյունափոխության դեպքերը: Հարուստ փաստական նյութով և գիտական խոր վերլուծություններով է կազմված «Ձևաբանություն» բաժինը:Հեղինակը մանրամասն քննել է բոլոր խոսքի մասերը իրենց քերականական կարգերով, երևան հանել յուրաքանչյուր գյուղի խոսվածքում դրանց դրսևորման առանձնահատկությունները, անհրաժեշտության դեպքում կատարել համեմատություններ այլ բարբառների և հին հայերենի հետ, բերել առատ ու սպառիչ օրինակներ, առանձին ենթաբաժիններով ներկայացրել ուսումնասիրության առարկա բարբառների ածանցման, բառաբարդման, շարահյուսական մի շարք յուրահատկություններ: «Բարբառային ազդեցությունների մասին» բաժնում Կ. Դավթյանը ուշադրություն է դարձնում բարբառային այլ միջավայրերից եկած և Լեռնային Ղարաբաղում վերաբնակվածների ու տեղական «ում» և «ա» ճյուղերի բարբառների փոխազդեցություններին՝ իրավամբ բացահայտելով, որ տարածքի մյուս բարբառները աստիճանաբար ենթարկվում են բուն Ղարաբաղի բարբառի ազդեցությանը՝ յուրացնելով վերջինիս հնչյունական և քերականական օրինաչափությունները: Ուսումնասիրության ամփոփումն է «Բարբառային խմբավորումներ և նմուշներ» բաժինը, որտեղ խմբավորվում են Լեռնային Ղարաբաղում գոյություն ունեցող բարբառային ձևերը՝ ըստ բարբառաճյուղերի, բարբառների, ենթաբարբառների, խոսվածքների: Հեղինակը առանձնացնում է տարածքում առկա վեց բարբառներ, որոնցից երկուսը Ղարաբաղի և Մեհտիշենի, «ում» ճյուղի, երեքը Հադրութի, Ճաղախ-Խծաբերդի և Չայլվի, «ա» ճյուղի, մեկը՝ Մարաղայի, «ը» ճյուղի: Ղարաբաղի բարբառը բաժանում է երկու խմբի՝ բուն Ղարաբաղի բարբառ /128 խոսվածք/ և Ղարաբաղի բարբառի ենթաբարբառային խոսվածքներ /9 ենթաբարբառ'20 խոսվածքով/, Հադրութի բարբառը բաժանում է երեք խմբի՝ բուն բարբառ/34 խոսվածք/, Տումու խոսվածք, Շուշիքենդի և Քարին տակի խոսվածքներ, Ճաղախ -Խծաբերդի բարբառում ընդգրկում է ութ խոսվածք և Ջանյաթաղի առանձին խոսվածքը, Չայլվի բարբառում Ներքին և Վերին Չայլուների խոսվածքները, իսկ Մեհտիշենի և Մարաղայի խոսվածքները առանձնացնում որպես առանձին բարբառներ: Վերջում բերվում են 40 գյուղերի խոսվածքներով գրառված օրինակներ, որոնց մի մասը բանահյուսական և գեղարվեստական գողտրիկ պատմություններ են և կարդացվում են մեծ հետաքրքրությամբ: Բարեխիղճ և տքնաջան աշխատանքի արդյունք է նաև աշխատության վերջում տեղադրված համադրական բառարանը, որտեղ գրաբարյան շուրջ 3000 բառերի համեմատությամբ տրվում են վերոհիշյալ վեց բարբառների համապատասխան բառային համարժեքները՝ շեշտադրության ցուցադրումով: Աշխատությանը կցված են նաև ութ բարբառագիտական քարտեզներ:

Ընդհանրացնելով այս ամենը՝ միանշանակ կարելի է ասել, որ Կ. Ս. Դավթյանի «Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը», իրոք, բարձրարժեք ուսումնասիրություն է, թերևս ամենակատարյալը առանձին բարբառների նվիրված բոլոր ուսումնասիրությունների մեջ, որը մեծապես կարող է նպաստել հայերենի բարբառագիտական ատլասի ստեղծմանը:

*Ա.Յու.Սարգսյան*